

## Հարցապրոյս

### ԼԻԲՆԱՆՍԻ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԲ

### ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲԻ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

### ՂԵԿԱՎԱՐ ԵՒ ԳԼԽԱՆՈՐ ԴԻՐԻԺՈՐ՝

### ՅԱՐՈՒԹ ՖԱԶԼԵԱՆԻՆ ՀԵՏ

**Հ.- Պրն. Ֆազլեան, կրնա՞ք մեր ընթերցողներուն ներկայացնել ձեր պաշտօնն ու գործունեութիւնը Լիբանանի պետական երաժշտանոցին մէջ:**

**Պ.-** Ներկայիս Լիբանանի ֆիլհարմոնիք սուլազախումբի գեղարուեստական ղեկավար եւ գլխաւոր դիրիժորն եմ: Վերջերս նշանակուեցայ այս պաշտօնին՝ որ գոյութիւն չունէր նախապէս: Ունէինք Տնօրէն՝ Ուալիտ Ղլմիյէ՝ որ երաժշտանոցի եւ



սուլազախումբի ղեկավարն ու նախագահն էր: Հիմա այդ պաշտօնը կայ եւ սուլազախումբը գեղարուեստական ու կազմակերպչական փոփոխութիւններու կ'ենթարկուի:

**Հ.- Դուք կու գաք շատ մեծ արուեստագետներու ընտանիքէ: Ձեր հայրը նշանաւոր դերասան, մայրը սոյնպէս: Անոնց երաժշտական տաղանդը սոյնպէս ժառանգա՞ծ էք արուեստագետի յատկանիշներուն հետ:**

**Պ.-** Ես բախտաւոր եմ որ միայն արուեստ տեսած եմ ընտանիքիս մէջ: Ուրիշ բան չենք գիտեր: Մօրս կողմէն նկարչական արուեստը գոյներու: Նաեւ թատրոնը, ինչպէս կը տեսնես, երաժշտութիւնը բեմական արուեստ մըն է: Անեկթօտ մը կայ որ կ'ըսէ՝ քուլիսի մէջ ծնած եմ... բախտաւորութիւն մը ունիմ որ ազդուած եմ ծնողներէս, մանաւանդ որ երբ հայրս Պերճ Ֆազլեանն է, եւ մօրմէս : Փոքր տարիքէս բեմ ելած եմ եւ այն եղած է առաջնահերթ, ինչպէս տունը: Բեմը միակ տեղն է որ արուեստագետը կրնայ անկեղծօրէն արտայայտուիլ: Սորված եմ թէ արուեստի նկատմամբ արուեստագետը պէտք է վերաբերի բժախնդրութեամբ:

Երաժշտութեան մէջ զիջումներ չես կրնար ընել եւ կարգ ու կանոնը շատ կարեւոր է: Մայրս դաշնակ կը սուլագեր, մօրաքոյրս դաշնակահար էր: Հայկական շունչով տան մէջ ապրած եմ եւ երաժշտութիւնը մեր մէջ միշտ եղած է, մանաւանդ որ մեծ հայրս Տիգրանակերտէն գաղթած էր եւ միշտ կ'երգեր:

Իմ վրաս մեծ ազդեցութիւն ունեցած են Ռահպանիները, որոնց հետ հայրս երաժշտախառն թատրոն կը բեմադրեր: Այդ ամբողջ մթնոլորտին մէջ ըլլալը, կարեւոր դեր խաղացած է երաժշտական տաղանդի ձեւաւորման եութեանս մէջ:



### **3.- Ո՞րտեղ ստացած էք Ձեր երաժշտական ուսումը:**

Պ.- Նախնական՝ Լիբանանի մեջ, ապա Գանատա, յետոյ՝ 1983 թուին որոշեցի քանի մը տարուան համար երաժշտական ուսումնա շարունակել Երեւանի մեջ, որ բարեբախտաբար տեւեց եօթը տարիներ...

Այնտեղ վկայուեցայ որպէս օփերայի ու նուագախումբի դիրիժոր, երգչախմբային ղեկավար եւ վերադարձայ Մոնթրէալ:

1996-ին առիթ ստեղծուեցաւ որ վերադառնայիսք Պէյրուս, ուր խօսքեր կային որ պետական երաժշտանոցը դարձեալ պիտի հիմնուէր: Ուալիտ Ղլմիէն որ հօրս բարեկամ էր, պատահաբար հանդիպելով իրեն, կ'առաջարկէ աշխատանք երաժշտանոցին մեջ եթէ վերադառնամ: Այնպէս որ ինչպէս կը տեսնէք՝ այստեղ եմ...:

### **3.- Որո՞նք են ձեր ծրագիրները մօտիկ ժամանակներս:**

Պ.- Նուագախումբին հետ ունիմ արդէն բաւական համերգներ: Բացումը ըրինք Սեպտեմբեր 27-ին: Հպարտ եմ որ ընկերակցած եմ Լիբանանի երեք մեծ երգչուհիներուն՝ Ֆէյրուզի, Ճուլիայի եւ Մեժիտէյի համերգներուն: Առաջին անգամ ըլլալով Լիբանանի երաժշտական պատմութեան մեջ՝ երաժշտական նուագախումբով ներկայացում իրագործեցինք որ սովորաբար կ'ըլլար ձայնագրմամբ: Կեդրոնի նուագախումբ եւ ձայներ, երգեր:

Անցեալ տարի ալ, Պէյթըտտիսի փառատօսին՝ «Քարաքալլա» համոյթի ներկայացումը եղաւ նուագախումբով՝ ոչ թէ բեմականացմամբ: Եւ ուրախ եմ յայտնելու, որ հայ մըն է այս բոլորը, եւ ոչ թէ Յարուս Ֆազլեանը, այս մեր բարի քարոզչութիւն իրագործողը:

Լիբանանի ֆիլհարմոնիք նուագախումբը կազմուած է 100 երաժիշտէ, որոնցմէ 60-ը դուրսէն եկած պայմանագրով երաժիշտներ են՝ որոնց մեջ նաեւ Հայաստանէն եկած երաժշտութեան վարպետներ: Նաեւ ռումանացիներ, պուլկարներ, չեխիա, ռուսեր եւ լիբանանցիներ ու լիբանանահայեր:

### **3.- Ի՞նչ խօսք ունիք փոխանցելու մեր ընթերցողներուն:**

Պ.- Երաժշտութիւնը ամենէն դիւրին ընկալուող արուեստն է: Կ'ուզեմ որ ամեն ընթերցող ինքզինքին առիթ տայ եւ գայ ունկընդդրելու մեր ֆիլհարմոնիք նուագախումբը, որ ամեն Ուրբաթ համերգ ունինք «Սէն ժոզէֆ» մեծ եկեղեցիին մեջ «Մօնօ»-ի շրջան եւ լսեն այս հրաշալի երաժշտութիւնը: Մենք Լիբանանի մեջ բախտաւոր ենք, որ մեր համերգները ձրի են...: Այսպիսի երկիր չկայ աշխարհի մեջ: Ուրեմն ամեն Ուրբաթ օր երեկոյեան ժամը 8:30-ին, «Սէն ժոզէֆ» եկեղեցիին մեջ, երբ մէկ անգամ զգան այս կենդանի հրաշալի երաժշտութիւնը, վստահ եմ որ շատ մարդիկ պիտի շարունակեն գալ այս համերգներուն:

Հարցազրոյցը վարեց  
**ՀԱՍՕ ՄՕՍԿՈՖԵԱՆ**